ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ «ԱՆԻ ՊՐԵՄԻՈՒՄ» ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

HSBC

060 655 000
www.hsbc.am

HSBC Բանկ Հայաստանը Ձեզ է ներկայացնում Արաբկիր վարչական շրջանում գտնվող «Անի Պրեմիում» բազմաբնակարան համալիրում բնակարանի ձեռք բերման հիփոթեքային վարկի հատուկ առաջարկ:

Բնակելի համալիրի մասին

Բնակելի համալիրը գտնվում է Արաբկիր վարչական շրջանում՝ Ադոնցի 19/4 փողոցում:
Համալիրը հագեցած է հետևյալ հարմարություններով և ենթակառուցվածքներով.

- 2000 քմ կանաչապատ տարածք,
- մանկապարտեզ,
- դպրոց,
- հիվանդանոց,
- ստորգետնյա ավտոկայանատեղի,
- 9 բալ սեյսմակայունություն:

Բնակարանները շահագործման են հանձնվելու.

- ներքին պատերը բաժանված և բարեկարգված գաջով կամ գիպսոնիտով,
- հատակը հարթեցված, պատշգամբի պատերը և տանիքը բարեկարգված,
- պատուհանները, պատշգամբի և մուտքի դռները տեղադրված,
- էլեկտրականության, ջրամատակարարման և ջրահեռացման հանգույցների առկայությամբ:

Վարկավորման հիմնական պայմաններ

Արժույթ	ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույք	12.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	13.49% - 16.77%
Վարկի գումար[1]	5 մլն - 200 մլն ՀՀ դրամ
Վարկի ժամկետ[2]	24 - 240 ամիս
Վարկ/գրավ հարաբերակցություն[3]	Գույքի արժեքի մինչև 90%
Կանխավճար	Սկսած 10%-ից
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 0.5%, առավելագույնը՝ 200.000 ՀՀ դրամ
Վարկի սպասարկման վճար	Չի կիրառվում

ՀՀ դրամով վարկերի համար անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝

9% + 3.5% = **12.5%,**

որտեղ՝

9%-ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է,
3.5%-ը՝ Բանկի հաստատուն մարժան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկի անվանական տոկոսադրույքը լողացող է և կարող է փոփոխվել մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի (ՄՀՏ) փոփոխության դեպքում, ոչ ավել, քան տարին երկու անգամ: Լողացող անվանական տոկոսադրույքը չի կարող փոփոխվել ավելի քան 7 տոկոսային կետով վարկի գործողության ամբողջ ընթացքում՝ անկախ տոկոսադրույքի հաշվարկման հիմքում դրված ցուցանիշների փոփոխության չափից: Նախատեսված առավելագույն/ նվազագույն շեմը սահմանվում է վարկի անվանական տոկոսադրույքի նկատմամբ:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են տարեկան անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

ՀՀ դրամով հիփոթեքային վարկի տրամադրման և սպասարկման ընդհանուր պայմաններին և կարևոր այլ բացահայտումներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.hsbc.am/pdfs/mortgages/residential-property-purchase-loan-amd/:

---

[1] Վարկի գումարի չափը կախված է նաև Բանկի կողմից սահմանված՝ վարկառուի ունեցած վարկերի գծով մարումների և եկամտի հարաբերակցությունից:
[2] **Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:**
[3] Կախված է տարբեր գործոններից, այդ թվում՝ գույքի գտնվելու վայրից (Երևանում/Երևանից դուրս), անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում՝ նաև լրացուցիչ գրավի առկայությունից (գույք, գնման իրավունք և դրամական միջոցներ) և այլն:

Ուշադրություն՝ սույն տեղեկատվությունը հանդիսանում է գովազդ:

Գործող պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով կարող եք այցելել նաև Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: